



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/ 121/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

16 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մայիսի 16-ին քննելով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ Ի հաշիվ ավագ քննիչի Չարենց Սամվելի Մանուկյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/121/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված

կարգով՝ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ ի հաշիվ ավագ քննիչի Չարենց Սամվելի Մանուկյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, այդ թվում նաև՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1. Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Չարենց Մանուկյանին 2008 թվականի հոկտեմբերի 28-ից համատեղ սեփականության իրավունքով պատկանում է ք.Երևան, [REDACTED] գտնվող անշարժ գույքը, մինչդեռ այն հայտարարագրված չէ վերջինիս Հայտարարագիրում:

2. Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում հայտարարագրված չեն Չարենց Մանուկյանի կնոջ՝ Վարսիկ Խաչատրյանի վերաբերյալ տվյալները:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 7-ին Չարենց Մանուկյանին հասցեագրել է թիվ 01/1931-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 16:00-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 16:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Չարենց Մանուկյանը ստացել է 2025 թվականի մայիսի 12-ին (հիմք՝ Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակը):

1.3 2025 թվականի մայիս 14-ին, պատշաճ ծանուցված Չարենց Մանուկյանի բացակայությամբ, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/78/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Չարենց Մանուկյանի բացակայությամբ 2025 թվականի մայիսի 16-ին, ժամը՝ 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարույթի մասնակից Չարենց Մանուկյանը մայիսի 12-ին Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է, որ Հայտարարագրում համատեղ սեփականության իրավունքով ք. Երևան [REDACTED] [REDACTED] գտնվող անշարժ գույքը, ինչպես նաև իր կնոջ՝ Վարսիկ Խաչատրյանի վերաբերյալ տվյալները չհայտարարագրելը եղել է տեխնիկական բացթողում:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/121/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Չարենց Սամվելի Մանուկյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականին Չարենց Մանուկյանը չի հայտարարագրել 2008 թվականի հոկտեմբերի

28-ից համատեղ սեփականության իրավունքով պատկանող է ք.Երևան [REDACTED]
[REDACTED] գտնվող անշարժ գույքը, մինչդեռ վերը նշված անշարժ գույքը հայտարարագրված չէ վերջինիս Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում:

3.3 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի տվյալների համաձայն Վարսիկ Խաչատրյանը հանդիսանում է Չարենց Մանուկյանի կինը:

3.4 Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում ներկայացված չեն կնոջ՝ Վարսիկ Խաչատրյանի տվյալները:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույք հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

4.4 Օրենսքի 39-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ ենթակետի համաձայն հայտարարագրում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը):

4.5 Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

4.6 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների**

առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ ի հաշիվ ավագ քննիչի Չարենց Սամվելի Մանուկյանի կողմից Հայտարարագրում ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

1. Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում չի հայտարարագրել, 2008 թվականի հոկտեմբերի 28-ից ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող ք. Երևան, [REDACTED] գտնվող անշարժ գույքը, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:
2. Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի ներկայացրել կնոջ՝ Վարսիկ Խաչատրյանի վերաբերյալ տվյալները, որով խախտել է Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջը:

1-ին կետում նշված խախտման կապակցությամբ Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ կետը, համաձայն որի Հանձնաժողովի եզրակացություններն ու որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որոշում չի կայացրել, քանի որ Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Մարուխյանը և Լիլիթ Ալեքսանյանը արձանագրված խախտումը՝ Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի մասին տվյալը չհայտարարագրելը էական նշանակություն ունեցող են գնահատել, հաշվի առնելով այն, որ նշված տվյալի չհայտարարագրման պարագայում հայտարարատու անձի գույքային դիրությունը ամբողջությամբ չի բացահայտվել, իսկ Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը և Արամայիս Փաշինյանը վերոնշյալ տվյալի չհայտարարագրումը հանրային վտանգավորության տեսանկյունից գնահատել են նվազ նշանակություն ունեցող, հիմք ընդունելով այն, որ նշված անշարժ գույքը հայտարարատուին պատկանում է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով և այն հայտարարագրված է որպես հայտարարտուի փաստացի բնակության հասցե, որպիսի պայմաններում ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն

գբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

2-րդ կետում նշված խախտման կապակցությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը, թե ոչ: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը, ինչպես նաև վերջիններիս գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը տվյալ դեպքում խաթարվել է Չարենց Մանուկյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալները, Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում: Մասնավորապես, նշված տվյալները չհայտարարագրելու և դրա հետևանքով պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չներկայացնելու արդյունքում պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրությունը Հանձնաժողովին և հանրությանը հասանելի չի դարձել և այդպիսով չի ապահովվել պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների գույքային դրության թափանցիկությունն ու նրանց հաշվետվողականությունը::

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պաշտոնատար անձի հանրային հաշվետվողականությունը,

վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ ի հաշիվ ավագ քննիչի Չարենց Սամվելի Մանուկյանի կողմից Հայտարարագրում ներկայացվել են ոչ ամբողջական տվյալներ այն է՝ Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի ներկայացրել կնոջ՝ Վարսիկ Խաչատրյանի վերաբերյալ տվյալները, որոնք պարտավոր էր ներկայացնել Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների հայտարարագրումն ունի էական նշանակություն հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության բացահայտման տեսանկյունից: Հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամների և մերձավոր ազգականների վերաբերյալ տվյալների հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ հանրային վերահսկողության տեսանկյունից հաշվետվողականությունը, գույքային դրության թափանցիկությունը, ինչի բացակայությունը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանմանը, համաձայն որի կնոջ վերաբերյալ տվյալները չներկայացնելու պատճառը եղել է տեխնիկական բացթողումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների հայտարարագրումը հանդիսանում է Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի

2-րդ կետի պահանջ: Միաժամանակ, Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն հայտարարատու անձը՝ պարտավոր է Հայտարարագրի «Ընտանիքի կազմ» բաժնում լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների տվյալները՝ նշելով նրանց կարգավիճակը: Յուրաքանչյուր հայտարարագրի լրացումից առաջ հայտարարատու պաշտոնատար անձը վերանայում է «Ընտանիքի կազմ» բաժնի տվյալները՝ ընտանիքի կազմում տեղի ունեցած փոփոխություններին համապատասխան: Նշվածից հետևում է, որ Հայտարարագրում առկա է հայտարարատու անձի ընտանիքի անդամների վերաբերյալ առանձին բաժին, որում նա պարտավոր է լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների, այդ թվում կնոջ, վերաբերյալ տվյալները, այսինքն հայտարարագրերի էլեկտրոնային համակարգը պարունակում է Օրենքով և ուղեցույցով սահմանված ընտանիքի անդամների վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալների մասին դաշտերը, որոնք պետք է լրացվեն Հայտարարագրում նույն կերպ, ինչպես լրացվում և պահպանվում են մյուս բաժիններում հայտարարագրվող տվյալները: Ուստի վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումն անհիմն է և չի կարող նշանակություն ունենալ վերջինիս կողմից դրսևորած արարքի գնահատման համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Չարենց Մանուկյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի

169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Չարենց Սամվելի Մանուկյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Չարենց Սամվելի Մանուկյանի այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Չարենց Սամվելի Մանուկյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ